Պարույր Սևակ

Աղաչում եմ

Աղաչում եմ.-
Մի՛ վրդովվեք, եթե ասեն
Փառասերին հենց փառասե՛ր,
Ո՛չ թե համեստ.
Սրիկային՝ հենց սրիկա՛,
Ո՛չ թե ազնիվ.
Հեռակային՝ հենց հեռակա՛,
Ո՛չ թե ներկա...
Աղաչում եմ.-
Մի՛ վախեցեք անկեղծ խոսքից.
Անկեղծ խոսքը չի սպանում,
Փակ խոցեր է միայն բանում:
Թե սոված եք և երեխա՝
Մի՛ վախեցեք լաց լինելուց.
Դե՛հ, քանի դեռ նա չի լալիս՝
Ծիծ չե՛ն տալիս:
Մի՛ վախեցեք
Ժանգոտ թասից ժանգ քերելուց.
Նա դրանից չի փչանա:
Մի՛ վախեցեք
Կեղծի մասին ճիշտ գրելուց.

Նա դրանից կքչանա:
Աղաչում եմ.-
Եվ թվաբա՜ն եղեք մի քիչ,
Բայց պայմանով այս ամոքիչ.
Ո՛չ թե ճշտին սուտ գումարեք,
Այլ բաժանեք սուտը ճշտին.
Ո՛չ թե վշտին գութ գումարեք,
Այլ բաժանեք գութը վշտին:
Եվ պարծեցեք ո՛չ թե հարցով.
Հպարտացեք լոկ լուծումո՜վ՝
Փակագրծի ճիշտ բացումով,
Մնացորդով
Ու քանորդով...
Աղաչում եմ.-
Եղեք նաև քիչ հոգեբան.
Եթե որդին տրտում երգով
Իր ծնողի մահն է սգում,
Աղաչում եմ, մի՛ ընդհատեք,
Ի՜նչ է թե նա... լա՛վ չի երգում...
Աղաչում եմ.-
Այս և նման այլ հարցերում
Երբևիցե ինձ չաղաչե՜լ...

9-10.VI.1957թ.
Մոսկվա